

# ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԵՆ ՆԵՐՍ ՍԿՍԱՆ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, արտատպում ենք Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի 1961 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր—նոյեմբեր միացյալ համարների խմբագրականներից գլխավոր մասը, Երուսաղեմի Ս. Հարության Տաճարում սկսված նորոգությունների մասին:

Աստվածաշնչական Երուսաղեմի պատմական սրբավայրերի, վանքերի և տաճարների մեջ հնագույնն է Ս. Հարության հսկա, գմբեթազարդ Տաճարը, կառուցված Քրիստոսի խաչելության և հարության նվիրական վայրերի վրա: Տաճարի կառուցումը բարձրանում է մինչև Դ դարի 20-ական թվականները:

17 դարի հնություն ունեցող Ս. Հարության այս Տաճարի գլխով անցել են շատ փոփոխություններ, Տաճարը, դարերի ընթացքում, ենթարկվել է բնական և քաղաքական փոփոխությունների պատճառած ավերածության, որոնցից հատկապես պետք է հիշել 1808 թվականի հրդեհը և 1927 թվականի երկրաշարժը:

Ս. Հարության այս Տաճարի «գլխավոր պահապաններն են» երեք իրավատեր պատրիարքությունները՝ Հայոց, Հունաց և Լատինաց, որոնք ամենօրյա սուրբ պատարագ և արարողություններ են կատարում այնտեղ:

Իրավատեր այս երեք պատրիարքարանների համաձայնությամբ արդեն իսկ սկսվել են վերանորոգության աշխատանքները:

Տաճարի նորոգության ընդհանուր ծախսը մոտավորապես հաշվված է 750 000 ստեռլինգ: Հայոց Պատրիարքարանը, իբրև մին երեք իրավատեր պատրիարքություններից, պետք է վճարի վերոհիշյալ ծախսերի գումարի մեկ երրորդը, այսինքն 250 000 ստեռլինգ, որպես նորոգության իր բաժինը:

Ս. Հարության Տաճարի նորոգության մասնակցության հարցը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ է: Դա բովանդակ հայ ժողովրդի պատվի, ազգային արժանապատվության և հավատի կենսունակության հարցն է:

Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վստահ են, որ հայ հավատացյալ ժողովուրդը, որպես Ս. Հարության Տաճարի երեք իրավատերերից մեկը քրիստոնեական միջազգային այդ սրբավայրի, սիրով կընդառաջի Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքի կոչին և կանգ չի առնի նյութական ոչ մի զոհողության առաջ, գոյացնելու համար Ս. Հարության Տաճարի ընդհանուր վերանորոգության ծախսերի իր բաժինը»

«Էջմիածին» ամսագիրը, Վեհափառ Հայրապետի հրամանով, հետագայում նորից կանդրադառնա այս կարևոր հարցին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

*Երկու ամիսներէ ի վեր սկսած են այդքան նորոգութիւնները Ս. Հարութեան Տաճարին ներս, համաձայն երեք Պատրիարքարաններու, Հունաց, Լատինաց և Հայոց ճարտարապետներու ներկայացուցած տեղեկագիրերուն և ցույց տված ուղղութիւններուն:*

*Ավելորդ չենք նկատեր, հոս, անգամ մը ևս կրկնելու, թե տարիներէ ի վեր մասնա-*

դետ ճարտարապետներու ուսումնասիրությանց և զննության առարկա եղող Ս. Հարության Տաճարը կկարոտի հետևյալ անհրաժեշտ նորոգություններուն.

Ա. Տաճարին գմբեթը վեր բռնող սյուները անհրաժեշտաբար պետք ունին բետոն ա[illegible] ներքին ամրացումներու, ինչպես նաև յուրաքանչյուր սյունին առանցքին մեջն ու շուրջը շղթայաձև գոտիներու, որոնք պիտի նպաստեն գմբեթի ընդհանուր կայունության։

Բ. Նորոգության և ամրացման պիտի ենթարկվին Ս. Գերեզմանը, տաղավարող կառույցին պատերն ու սյուները։ Մասնագետ ճարտարապետները իրենց տեղեկագրին մեջ դիտել կուտան, թե Գերեզմանի մատռան այժմու կառույցը, 1808-ին Ս. Հարության հրդեհեն վերջ հույներու կողմե նորոգված, չի ներդաշնակվիր Տաճարի ընդհանուր ճարտարապետության հետ և պետք ունի որոշ փոփոխություններու։

Գ. Փլչելու վտանգին ներքև է նույն Ս. Հարության Տաճարի մուտքին արտաքին մասը։ Ճակատին վերի կառույցները դեպի դուրս շեղած են և զարդաքանդակներու մեծ մասը մաշած ու կոտրտած։ Համաձայն ճարտարապետներու թելադրության, ամբողջապես վար պետք է առնվի ճակատի այս մասը և խնամքով վերստին վերաշինվի, ամբողջացնելով թերի և պակաս կողմերը։

Դ. Անհրաժեշտ նկատվեցավ, նորոգությանց սկսելե առաջ, ընդհանուր քննության առարկա ընել Տաճարին հիմերը և անոնց հետ կապ ունեցող ջուրի ճամբաներն ու ջրհորները։

Այսպես, շուրջ երեսունհինգ տարիներե ի վեր որակարգ եղող Ս. Հարության Տաճարի նորոգության ծրագիրը վերջապես գործադրության կդրվի, հավանությամբ և մասնակցությամբ իրավակից Պատրիարքարաններու....։

Ս. Հարության Նորոգությունը կգրավե ջերմ հետաքրքրությունը բովանդակ քրիստոնյա աշխարհին։

Առաջին անգամ չէ, որ Ս. Հակոբյանց նվիրյալ և զինվորյալ միաբանությունը հարկին ներքև կգտնվի մտածելու Ս. Տեղյաց մեջի մեր նախնիքներեն ժառանգ մնացած իրավունք սրբավայրերու պահպանությանը մասին։ Հոս, ի պատիվ հաստատության հոգեոր զինվորներուն, պետք է ըսել, թե միայն պատմության չէ որ կպատկանին այն սխրալի զոհաբերումները, որոնք այս Ս. Ուխտի քաջակորով նվիրյալներուն գործն են եղած, ինչպես երեկ՝ այնպես ալ մեր օրերուն, Ս. Երկրի մեջ մեր կրոնական և ազգային իրավանց ի պաշտպանություն։ Այդ գործը իր կարելի և վայել գիտակցությամբ և լրջությամբ կշարունակվի այսօր նորեն, հակառակ բազմապիսի դժվարություններու....։

Դյուրին չէ եղած անշուշտ ազնիվ ձիգերու և զոհողություններու այս գործը, պատմության դարերն ի վեր։ Անոնք որ ծանոթ են այս հաստատության կյանքին և անոր շուրջը եռացող իրադարձությանց, կրնան վկայել, թե հրաշքներու հավասար ջանքեր ի գործ դրված են, դիմավորելու աղետներն ու դժվարությունները, որոնք միշտ անպակաս եղած են միջազգային կրոնական այս ոստանեն ներս։

Այդ հրաշքը նախ մեր ժողովուրդին սերն է, իր հոգեոր ու ազգային սրբություններու և հաստատություններու նկատմամբ, ապա Աստուծո հրաշագործ զորությունը, որ չէ լքած մեզ բնավ, մեր ազգային տագնապներու և ժամանակի չար բերումներու ընդմեջեն։

Փա՜ռք երախտաշատ մեր նախնյաց, որոնք ըրած են իրենց լավագույնը, Ս. Երկրի մեջ նախ մեզի համար ապահովելու համար հոգեոր այս գանձը, ապա հաջորդող սերունդներուն կտակելու սրբազան իրավունքը, որ հակառակ ժամանակի ընթացքին ենթարկված բազում կրճատումներու, տակավին կրնա մեզի երախտագիտություն հարկադրել անոնց սուրբ հիշատակին առջև։ Այժմ մերն է պարտքը ընելու մեր գերագույնը, պահելու և մեր հաջորդներուն հանձնելու ազգին այս ժառանգությունը։ Ասիկա միայն եկեղեցական ու ազգային պարտականություն մը չէ, այլ նաև փառք մը և պատիվ մը, միջկրոնական և միջազգային այս նվիրական ոստանին մեջ։

Քաղցր զգացումն ունինք մտածելու, թե Ս. Հակոբյանց միաբանության ուսերուն դրված այս ծանր բայց սրբազան պարտականությունը միայն մերը չէ, այլ բովանդակ հայ ժողովուրդին, ի սփյուռս աշխարհի։ Վստահ ենք, որ մեր ազգային հաստատությունները, կրոնաղգած և ազգանվեր ունեորներ, ինչպես նաև բովանդակ հայությունը միահամուռ, պիտի չուզեն, որ մեր Եկեղեցիին ու Ազգին դիրքը նվազի կրոնական ու ցեղային իրավունքներու մրցարանը հանդիսացող Ս. Երկրին մեջ, և անոնք բոլորը պիտի ընեն իրենց առավելագույնը, ապահովելու մեր բաժին իրավունքները, Ս. Հարության Տաճարի համաքրիստոնեական այս Սրբարանին նորոգության առիթով։

Նորոգության գործին վերաբերյալ ճշտվեցան հետևյալ տեսակետները.— Այն մասերը Տաճարին, որոնք յուրաքանչյուր հարանվանության առանձինն սեփականությունը կնկատվին և ենթակա են իր իրավասության, հետաքրքրվող հարանվանությունը ինք պիտի հայթայթե վերաշինման ծախքը։ Իսկ այն մասերը, որոնք հասարակաց սեփականու-

թյուն ընդունված են, երբ Պատրիարքարանները հավասար իրավունքներով և ծախքով պիտի բերեն իրենց մասնակցությունը։

Թեև վերանորոգման ընդհանուր գնահատանք մը վերջնականապես չէ ճշտված, այնուամենայնիվ մոտավորապես 750 000 ստեռլինգի ընդհանուր ծախք մը կնախատեսվի, համաձայն ճարտարապետներու գնահատման։ Հայոց Պատրիարքարանը, իբրև մին երեք գլխավոր հարանվանություններեն, որոնք սեփականության իրավունքներ ունին այս աշխարհահամատուռ ու պատմական Տաճարին մեջ, վերոհիշյալ ծախուց գումարին մեկ երրորդը, 250 000 ստեռլինգ, հոգալու հարկին ներքև է, կարենալ ապահովելու իր տասնվեց դարերե ի վեր այս Տաճարին մեջ ունեցած եկեղեցական ու ազգային իրավունքները, որոնք դարերով ճանչցված ու վավերացված են Ս. Երկրի վրա տիրապետության իրավունք ունեցող կառավարություններեն, սկսյալ Օմար խալիֆայեն, Սալահ-էդ-Դինեն, Օսմանյան սուլթաններեն, Բրիտանական հոգատարութենեն և Հորդանանի թագավորեն, արքայական ֆերմաններով և վաղնջական այդ իրավունքները հաստատող վավերագրերով։ Մեր իրավունքները ճանչցված են նույնպես միջազգայնորեն Փարիզի դաշնագրին մեջ, 1856-ին, Ղրիմի պատերազմեն հետո, 1878-ին՝ Բեռլինի դաշնագրով։

Ինչպես կհետևի, այս դարավոր ու պատմական կարևորություն ունեցող եկեղեցիին մեջ կարենալ պահելու մեր սեփականության իրավունքը, պարտինք Հունաց և Լատինաց Պատրիարքարաններուն հետ հավասար բաժիններով բերելու մեր մասնակցությունը վերաշինության գործին։ Ասիկա կենսական հարց մըն է մեր գոյության իրավունքը կարենալ պահելու համար, որովհետև պատրիարքական մեր իրավունքները կբխին Ս. Տեղյաց մեջ մեր ունեցած իրավասություններեն։



ՌԱ-4830